Արձանագրություն թիվ 4

2018թ. Հունիսի 11-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 3-րդ «Ա» դասարանի ծնողական ժողովը: Ծնողական ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Լիլիթ Բաբայանը: Ծնողական ժողովը վարում էր դասղեկ Լիլիթ Բաբայանը:

Օրակարգում՝

1) 2017-2018 ուսումնական տարվա արդյունքների ամփոփում:
2) Ընթացիկ հարցերի և էքսկուրսիայի քննարկում:

1. Լսեցին. - 2017-2018 ուսումնական տարվա արդյունքների ամփոփման հարցը:

Դասղեկը ներկայացրեց դասարանի ընդհանուր վիճակը, ամբողջ տարվա ընթացքում կատարած աշխատանքը: Ներկայացրեց դասարանի առաջադիմությունը: Դասարանում սովորում են 31 աշակերտ, որից 7-ը գերազանց առաջադիմություն ունեն.

1.Ադիբեկյան Միլենա Արմենի

2.Գալստյան Նվարդ Բագրատի

3.Գալստյան Նվեր Բենիկի

4.Թարոյան Գոհար Գևորգի

5.Հակոբյան Թամարա Վահեի

6. Մարգարյան Վարդգես Լեոնիկի

7.Նիկողոսյան Իոեն Էդգարի

Դասարանի աշակերտներից 13-ը հարվածային են, որոնց մեջ կան աշակերտներ, որոնք ունեն 1 կամ 2 առարկայից 8 գնահատական: Դասվարը ծնողներին ասաց նաև, որ դասարանում կան աշակերտներ , որոնք մի փոքր ավել աշխատասիրություն ցուցաբերելու դեպքում ավելի լավ արդյունքներ կարող են ապահովել:

Որոշեցին՝

Ավելի հետևողական լինել աշակերտների ուսումնական գործընթացին, որովհետև դասարանում կան աշակերներ , որոնք կարող են ավելի բարձր առաջադիմություն ապահովել: Որոշեցին նաև ամառային արձակուրդներին հանգստանալուց բացի աշխատեն երեխաների հետ, որպեսզի չմոռանան անցած նյութը:

2. Լսեցին. - Ընթացիկ հարցերի և էքսկուրսիայի քննարկում:

Դասղեկ Լ. Բաբայանը խոսեց երեխաների կարգապահական խնդիրների մասին: Նա նշեց, որ դասարանի տղաները շատ ակտիվ են եղել տարվա ընթացքում, երբեմն թույլ են տվել կարգապահական շեղումներ, որոնց նկատմամբ դասղեկը եղել է հետևողական, աշխատել է շտկել նրանց վարքը:

Քննարկվեց նաև տարեվերջյան էքսկուրսիայի հարցը:Քննարկմանը մասնակցում էի բոլոր ծնողները: Դասղեկը առաջարկեց երեխաների էքսկուրսիան անցկացնել բնության գրկում՝ Բազմաղբյուրում:

Որոշեցին՝

Ավելի հետևողական լինել երեխաների կարգապահության նկատմամբ: Էքսկուրսիայի կազմակերպչական հարցերով կզբաղվեն ծնողական խորհրդի անդամները (անհրաժեշտ գումարի հավաքում, տրանսպորտի և սնունդի հետ կապված հարցերի լուծում): Ճշտվեց տրանսպորտի և տեղի արժեքը, հաշվարկվեց մոտավորապես որքան գումար կծախսվի երեխաների սնունդի հարցը լուծելու համար և արաջարկվեց ծնողական խորհրդի մոտ հավաքել անրաժեշտ գումարը (1 աշակերտի համար 3000դրամ)՝ էքսկուրսիան կազմակերպելու համար:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Շ. Հարությունյան

Քարտուղար՝ Թ. Անտոնյան